

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լուրով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբարսիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1887 ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, Նոյն դիւրով և Նոյն պրօգրամայով: Մենք ստանում ենք սեփական
ՀԵՌԱՅԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ (Բարձրակարգ և Բարձրակարգ փողոցների ան-
կիւնում, Թամաշիւլի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ը գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԻՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բազուի հայ կանայք.
Տիկին Սալմայիլ բէնէֆիւր. Ներքին լուրեր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիայի զինուորական
ուժեր. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵ-
ՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նախապաշարմունքի դոճ.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒՆ ՀԱՅ ԿԱՆԱՅԻ

Մի ամենամանկութեան եղբայրացութեան կը
հասնենք, երբ լաւ քննելու լինենք այն հարցը
թէ ինչո՞վ է պարտավոր հայ կինը Բազուում,
ինչ մի յիշատակելու արժանի հասարակական
կամ ընտանեկան հարցով են զբաղված կանայք.
հասկանալի է թէ ինչ չնայած երկուստեք է, երբ
իզական սեռը ամեն գործում յետ է մնում, և չէ
հետեւում միւս սեռի զարգացմանը:

Երբ մի կողմից տղամարդիկ ունեն հասարա-
կական հիմնարկութիւններ՝ Մարդասիրական ըն-
կերթիւն, դպրոց, աղքատների ընկերութիւն,
անկեղծաց, թատրոնական ակումբ և այլն, մինչ-

դեռ, ասում ենք, տղամարդիկ իրանց անհատա-
կան կենսական զուրս ունեն, կամ ուղում են ու-
նենալ ուրիշ որ և է հասարակական գործ, ու-
ղում են ծառայել մի որ և է հասարակական
գործաւորի, միւս կողմից մի տիպի եղբայրացու-
թեան է համարում մարդը, երբ մտածում է թէ՛
ապա մեր կանայք ինչո՞վ են զբաղված: Գտնվելով
14—15 տարի Բազուում, մի անգամ միայն ա-
ռիթ ունեցայ տեսնելու, թէ ինչպէս այստեղ հայ
կինը մասնակից էր մի հասարակական հանգամա-
կութեան, այն է սովորական տաճկահայ քայլերի
օգտին ժողովարարութեան գործում, որ և ամեն-
քը յիշում են, և այն գովելի գործում արդարեւ
Բազուի հայ կինը մեծ օգնութիւն ցոյց տուեց.
բայց նրանից յետոյ անցան, գնացին տարիներ
և այստեղ կինը ընկաւ տեղի թմբուկեան մէջ, փո-
խանակ գործելու, փոխանակ մասնակցելու այս
կամ այն գործին: Եթէ բաժանելու լինենք Բազուի
հայ կանայք երեք կարգի, և վեր առնենք առա-
ջին կարգի պատկանողներին, այն է իրանց լու-
սաւորված կարծողներին, կը տեսնենք որ սոքա
ներկայացնում են ոչ այլ ինչ, եթէ ոչ պահապա-
նութեան երկրպագուներ, ժամանակակից փոքր
սալօնի անդամների պատկեր. նրանք զիտեն չքե-
ղութեամբ, մինչև իսկ չաղլուկեան հասցրած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔԻ ԶՈՆ

Բայնիդուրը կամայ կամայ մտնում էր Բա-
րակ-Չորի հեղեղատին: Արդէն լուսինը բաւական
ժամանակ երևում էր: Նա հասաւ Չորի ափը,
բայց սիրտ չէր անում ներքև իջնել: Նա կանգնեց
մի փոքր և սկսաւ իր չորս կողմը դիտել. մինչև
անգամ մի միտք ծագեց նրա գլխում՝ յետ դառ-
նալ: Բայց դա անխելութիւն էր, որովհետեւ
չուտով նա կը հասնէր Չորի գետ, այն ինչ տուն
վերադառնալու համար պէտք էր 3/4 մասը ճանա-
պարհի նորից գնալ և բացի այդ յետ դառնալը
վտանգաւոր էր նրա համար, քան թէ առաջ զը-
նալ:

Ինչ և է Բայնիդուրը երկու կրակի մէջն էր մնա-
ցել. մինչև նա մտածում էր իր անկեղծ մասին,
նրա բաղձը լուսինը մտաւ ամպերի յետեւ, աշ-
խարհը միանգամայն մթնեց նրա աչքերին, տեղի-
ուտեղը շարժւած 1) մնաց Բայնիդուրը:

Նա սարսափում էր մինչև անգամ դէպի Չորը
նայելու, որը դժուար չէր նրան ահաբեկ և մոլոր
երևում նրան: Տեղից շարժվել և չէր սիրտ ա-
նում: Նա կամայ կամայ մտնեցաւ և յենկեցաւ
մի չղամբու: 2) իրա և աչքերը յառեց գետին:
Ներքեւ հոտում էր Բարակ-Չորի սառնորակ ա-

ռուս խոտովալով, իսկ նրա երեսին լողացող չոր
տերևները ու չորիկները (չիւր) այս և այն ափին
չփոխելով խնայելու, վազելու և հաղորատու ձայ-
ներ էին հանում, իսկ մի փոքրիկ հաճարի «փռ-
ուակ» 1) իր ֆոնֆորային կախարդիչ զոյնն էր
արձակում: Բայնիդուրը վախճում էր աչքերը
բարձրացնել, որպէս զի չը տեսնէ չքմերի սար-
սափելի պատկերը, որոնց ձայնը նրա ականջին
էր համարում: «Արի Բայնիդուր» յանկարծ լսուեց
նրա ականջում:

Նա ցնցվեց ամբողջ մարմնով և չուշչը պա-
հեց: Բայց կրկին հեռացան ամպերը և լուսինը
զարձակալ լուսաւորեց խնայելու առաւել: Բայնի-
դուրը աչքերը բարձրացրեց, քաջերը հնուցեց
էին և նա տեսնում էր մաքուր ճանապարհ: Նա
կանգնեց և ստան թրտիքը սրելով ճակատից
մտաւ ձորը, որքան դանդաղութեամբ նա ձորը
մտաւ, այնքան ունել արագութեամբ և համա-
րեալ վազելով անցաւ նա միւս ափը: Նա
սկսաւ վազել, որքան ոյծ ունէր: Ճանապարհի եր-
կու կողմն ընկած քարերն երևում էին նրան
կրկին արջի զօթիթիւններ, որոնք միջիններ էին
հաւաքում, երբեմն դալեր, որոնք յետի ոտների
վրա պզկած առանձիններ սրում էին, ծառերի ճիւ-
ղերը նրա աչքին պարզած ձեռքեր էին երևում:

Ծառերի ճիւղերի միջից նա տեսնում էր դա-
նազան ձեռքեր, որոնք նրա գլխին տեղներն էին
ցանում, մինչև անգամ մէկը վերցրեց նրա զիւրից
զիւրիկը, բայց նա վախեցաւ և անհետ
նում էր ծառի ճիւղից կախած իր զիւրիկը: Մի
ուրիշ ձեռք այնքան մոտեցաւ երեսին, որ քիչ էր

կերպով հազնվել, սիրում են ատել մայրենի լե-
զուն:

Առնենք երկրորդներին, որոնք առաջինների
պէս հարուստ դասակարգին չեն պատկանում,
չունեն ոչինչ կրթութիւն, պահում են իրանց հը-
նուանդ «չարսաւներ» մէջ, և Նոյն չարսաւ մէջ
փոքր առ փոքր իւրացնում են մօռ ահ: Սրանք
աշխատում են միայն հասնել «մօռնի» կանանց դիւ-
քին, դոցա կենսական փոփոխութեան մէջ ոչինչ մի
առանձին, ուշադրութեան արժանի բան չը կայ:

Երբոր կարգը ներկայացնում է հայ արհեստա-
ւորի կինը, որը գտնվում է շատ սահմանափակ
ըրութեան մէջ, և իր տոկոսն աշխատութեամբ
կատարում է տան ամեն գործը: Գործը գտնվում
են դեռ հին կենսական շրջաններում: Բնորոշապէս
բոլորին միասին վերցնելով, ոչինչ ուրախալի ե-
րևոյթ չէ կարելի նկատել: Մի խօսքով կարելի է
ասել, որ նրանք վարում են ամենապարզ կե-
նանք. նոքա չեն ըմբռնում իրանց կոչումը, չը
զիտեն ինչ ասել է կ ի ն, մ ա յ ր:

Արդ, ինչ դարձան, ինչ հնար կայ հայ կնոջը
այդ թմբուկի մէջ աղատելու: Գլորիայի հետ միա-
սին կնոջ առաջնորդութեանը պէտք է նպաստի
և հասարակական կենսական, ընտանեկան նեղ շը-
ջանը բաւական չէ և հայ կինը չը պէտք է սահ-
մանափակվի միայն նորա մէջ: Հասարակական
ասպարէզը Բազուում շատ լայն է և կնոջ հա-
մար: Ահա անգլիկ Բազուում. որքան աղքատներ,
որքեր, անտէր ընտանիքներ, չաղլուկներ, և հա-
զար ու մի հասարակական տիպեր և ցանքեր, ո-
րոնց դէմ պէտք է կռուել, որոնց առաջը պէտք է
առնել. և միթէ, ճշմարիտ, հայ կինը անընդունակ
կը լինի ունենալ մի որ և է հասարակական գոր-
ծունէութեան ասպարէզ: Մեր փոքր ի շատէ չարժ-
վող կենսական մէջ նորաւոր հարցեր են երևան
գալիս, և ժամանակ է որ կանայք միջամտեն
այդ հարցերի մէջ: Այստեղ մի հայ կին մինչև
օրս չէ խառնվել ոչ մի հասարակական գործում:
Սակայն որպէս զի Նոյն իսկ իրական սեռի կեր-
թութիւնը կարողանայ մշտական աղքատութիւն
ունենալ, որպէս զի այդ կրթութիւնը մի որոշ
ուղղութիւն կարողանայ տալ կնոջը, նրա կենսա-
բոլոր շրջաններում, հարկաւոր է, որ կինը ու-
սումնաբանից դուրս, հետաքրքրվի մի որ և է

լայն մտքով, հետաքրքրվի ընդհանրութեան վերա-
բերեալ մի գործով: Հակառակ դէպքում թէ կնոջ
մասնակցութիւնից և գործունէութիւնից զրկված
կը լինի հասարակութիւնը, և թէ դպրոցը չէ կա-
րող բաւարար ներգործութիւն ունենալ: Եւ եթէ
այժմ Բազուի կանայք չեն կարող ինքնուրոյն մի
գործի և մի դադաւարի ծառայել, եթէ չեն կա-
րող ձեռք զարկել մեծ, դժուարին գործերի, մի-
թէ չեն էլ կարող կռուել այն անտէրի և ցանքի
դէմ, որոնցով հենց իրանք չը շաղկապված են: Բա-
զուի բոլոր անկենդանութեան շատ կան բազմաթիւ
աղքատ աղջիկներ, որոնք կարօտ են օգնու-
թեան և ուսման. Բազուի մէջ շատ կան օրորող
ներ, որոնք նիւթական օգնութեան են կարօտ:
մի փոքր անկի կրթութիւն ստանալու համար.
մեր քաղաքում չաղլուկներ օրից օր տարած-
վում է, և դրա դէմ պէտք է կռուել: Այդ բոլոր
ցանքերն դարձան տանելու համար մեր կանայք
պէտք է խմբվեն, միմեանց հասկանան, հաղոր-
դակցվեն միմեանց հետ քաղաքացիներով և մի-
ջոցներ գտնեն դրանց առաջն առնելու համար,
զէթ հիմնելով փոքրիկ ընկերութիւններ: Եւ զար-
մանալին այն է, որ այստեղ միշտ կարելի է
հանդիպել այնպիսի կանանց, որոնք առանձին
առանձին բողոքում են անգործունէութեան, մի-
ատեսակութեան, չաղլուկեան, պահապանութեան
և սրան նրան օգնելու կարեւորութեան դէմ:—
բայց այդպէս խօսողներն էլ չեն աշխատում մի-
անալ և միասին մի գործ կատարել: Այդ ոչ թէ
ուրախալի չէ, այլ և շատ ցաւալի է: Հասարա-
կութեան ընդհանուր շահերը պահանջում են, որ
հասարակութեան բոլոր անդամները, թէ կին և
թէ տղամարդ, միասին առաջադիմեն, և մեր
կանանց այժմեան անարժանութիւնը մի մահաբեր
հարուած է այդ հիմնական մտքին: Ժամանակ է
և Բազուի կանանց հասարակական ասպարէզ իջ-
նելու:

Կ. Ի. Ն.

Տ. ՍԱՎԻՆԱՅԻ ԲՆՆԵՑԻՍԸ

Թիֆլիսում վաղուց չը տեսնված շքեղութեամբ,
երկուշաբթի, յունիսի մէկին, կատարվեցաւ տ. Սա-
վինայի բննեցիւրը: Քաղաքային թատրոնում ար-

բակ-Չորի քաջերն են, որոնք այժմ նրա առաջն
են եկել և գնալ չեն թողնում: Նրանք թմբուկա-
րում են, փչում են փողերը, չիտում միմեանց դա-
նազան թիթիկներ և պարում: Հեռու զօղան
չում է մի դանդաղ, այդ Բայնիդուրի մահաւան
զանգակն է: Այս բոլորը տեսնում է նա և լսում,
բայց ոչինչ անել չէ կարող. նրա ձեռքն ու ոտը,
լեզուն աղօթել են, նա ուղում է երեսին խաչ
քաշել, բայց ձեռն իրան անհնազանդ է:

Ահա մտնում է նրան քաջերի թագաւորը
սիւրեւի դանակ, այդ ինչ է ըստ օրը, արի մօտ:
կանչում է նա: Բայնիդուրը թմբուկը ցամաքե-
ցաւ, լեզուն «ցմեցեց» 1), սիրտը թրթռում էր,
աչքերը սկսան միջնել... նա տեսնում էր իր ա-
ռաջը գրկաբաց կանգնած ստանանների մեծին,
որը ուղում է գրկել և փախչել: Նա ժողովեց իր
ոյժը, բարձրացրեց շամփուրը «չեմ... չեմ...»
գ...ա...: Հաղիւ հաղ արտասանեց նա և շամփու-
րը ցցվեցաւ քաջերի թագաւորի կուրծքը. Բայնի-
դուրը վազը ընկաւ:

—Ախ, Բայնիդուր ջան, այդ ինչ արիւր, ինչ
կղաւ թիւ, դու սպանում ես հօրը... Տիգրանը ա-
մուր բռնեց շամփուրը վերքում, որ արիւն շատ չը
հոսի և գրկելով որդուն ուղղվեցաւ հնձանը:

—Բայնիդուր, Բայնիդուր, կոչում էր Տիգրանը:
Նա հանեց շամփուրը և խեղաքարի նման տուեց
պատուով ու գոչեց որդուն:

—Բայնիդուր ջան, որդիւ, Բայնիդուր, Բայնի-
դուր...
Բայց Բայնիդուրը վաղուց անզգայացել էր աշ-
խարհային բոլոր ձայների համար:
Գորպատ.

1) ցմեցել—սաստիկ ցամաքել:

1) Շուրաբ—շափաղկաւոր, մոլորված:
2) Ղամ (ը) թիւ, դամ (ը) քու—ծառի անուն է:

1) Գաւակ—փառաւոր—փառած փայտ:

դէն երկու երեք օր առաջ այլ ևս տոմսակ չը կար, և բազմաթիւ անձինք տխուր հեւանում էին կատարել մօտից, լսելով տոմսակալաճառն ու Պետ- րովիկու անողը պատասխանը շտապով չը կայ: Տ. Սավինա ընտրել էր իր բնակարանի համար Շորոքիյա (Шороки) գրաման: Այդ գրաման ինքնուրուիքն ունէր չէ ներկայաց- նում, բացի էֆէկտներէ, աչքի ընկնող տեսա- րաններէ մի կուտակում, որոնց մէջ հեղինակը առիթ է տալիս դերասանուհուն ամենայն կերպ ցոյց տալ ճանդիտականներին իր տաղանդի բոլոր կողմերը: Տ. Սավինա պայուսն կերպով օգտվել էր այն ամենից, ինչ որ տուել էր հեղինակը և հիանալի խաղով ապշեցրեց ամենքին: Առաջին անգամ բեմի վրա երևալուն պէս յարգելի դերա- սանուհուն հասարակութիւնը ընդունեց անվերջա- նալի և բուռն ծափահարութիւններով և բեմի ա- ռաստաղից սկսեց տեղալ «Ճ ա ղ Կ և ա յ յ ո ղ ա ն ձ ր և յ»: Դրամահարութիւնները և ծ ա ղ Կ և ա յ ա ն ձ ր և յ եր կրկնուում էին և բոլոր այն գործողութեանց վերջում, որոնց մէջ մասնակ- ցում էր տ. Սավինա: Չափազան անճանց և հիւ- նարկութիւններ կողմից տրվեցան մօտ քսան չը- քեղ փոշիք, զարդարված գեղեցիկ ժապաւնիս- րով, ի միջի այլոց տրվեցան փոշիք և հայոց դրամատիական ակումբի վարչութեան և պ. Ա- դամանի կողմից: Տրվեցան նոյնպէս շատ թան- կազին նուէրներ, որոնց մէջ առաջին տեղն էր բռնում հայոց դրամատիական ակումբի անդամ- ների կողմից տրվածը, որ ներկայացնում էր երկու ոսկէգծ ծածկաթե կուժ և մի քանի բաժակ, որոնց տակ սխալված էր շատ թանկագին մի շարժ Այս- պիտով հայ հասարակութիւնը առիթ ունեցաւ վերջապէս ճորհակալութիւն յայտնել յարգելի տիկնոջ, նրա 1878 թականի բարեգործութեան համար յօգուտ հայ գաղթականներէ: Ռուսաց դե- րասանական խումբը բեմ դուռն գալով տուեց մի շքեղ ալբոմ, որի մէջ ներկայացած էին խմբի ան- դամների պատկերները: Ներկայացումը վերջանա- ւոց յետոյ ամբողջ հասարակութիւնը դրսում սպասում էր տ. Սավինային. փողոցը լուսաւորված էր գոյգոյն լապտերներով, և ամուսն էին դիմու- րական երաժշտութիւնը և տեղական դուռնան: Տեղից փողոց դուռն գալով ընդունվեցաւ «ու- րայով»: Չափազանց յուզված դէմքով նա նստեց կառք և սկսեց ճորհակալութիւն յայտնել հասա- րակութեանը: Մինչև տիկնոջ բնակարանը, այն է Եկովկա՝ հիւրանոցը, հասարակութիւնը թէ կառ- քերով թէ ստով ճանապարհ ձգեց նրան: Ուղերու- թեան ամբողջ զիծը լուսաւորված էր բեմական կրակներով: Հիւրանոցի առաջ, հրապարակի վրա կար փայլուն հրաբաղուցիւն: Հրապարակի վրա մի կատարեալ իրարանցում էր տիրում. հասարակու- թեան բացականչութիւնները, երաժշտութեան և դուռնայի ձայնը, հրաբաղութեան փշփշոցները և պայթիւնները միախառնվելով, մի անպատմելի և աննկարագրելի տեսարան էին ներկայացնում: Տ. Սավինա մի քանի անգամ երեցաւ հիւրանոցի պատշգամբում և խոր դուռն տալով, ճորհակա- րութիւն յայտնեց: Վերջապէս յօգնած հասարա- կութիւնը սկսեց ցրվել: Այս երեկոյի յիշատակը անկասկած երկար կը մնայ թէ յարգելի դերա- սանուհուն և թէ բոլոր ականատեսների յիշողու- թեան մէջ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ մեզ գրում են մայիսի 27-ից հե- տեալով: «Մայիսի 31-ին, տեղիս Գալիսիան օրիորդաց դպրոցում բարձր իշխանութեան թոյլ- տուութեամբ, լինելու է վիճակախաղ յօգուտ նոյն դպրոցի»:

Մեզ գրում են ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ, որ մայիսի 31-ին, առաւօտեան 8 ժամին Ներքինից դուրս է գալու այդտեղի առաջնորդ, գեր. Գեորգ Լալիպոյոս Ստրէնանց, ուղեորովելով իր նոր պաշտօնատե- րին: Աստիճանն «Յանկանը և ի յոյսերով սպա- օնեք, աւելացնում է թղթակիցը, որ Լալիպոյոսը կուղարկէ մեզ սրբազան Ստրէնանցի տեղ, նոյն- պէս մի արժանաւոր և գործունէ պիտանորդ, արժանաւոր կերպով կառավարելու համար Ներ- քանի և Լալիպոյոսի ընդարձակ և առաջնակարգ թեմը: Պէտք է խոստովանել որ թիմիս հոգեւոր կառա- վարութեան մէջ հարկաւոր կարեւոր գործեր կան երեւի վրա ընկած մնացած»:

Պարսկաստանից ստացած մի մամուլուր նամու-

կից քաղում ենք հետեւեալ բերը: «Լուսն էր որ Աստուածականի առաջնորդ Միխայիլեան կայս- րուհու վճռած լինելով թաղելովում մի հայոց տղարան ունենալ, մտադիր է Ներքինում մի հին հայոց տղարան աւելնել և տանել թաղելով: Որքան մեզ յայտնի է, այդ տղարանը միանգամայն ան- պէտք, փչացած է արդէն և մեր կողմից պարտա- տրութիւն ենք համարում զգուշացնել սրբազա- նին, որը գուցէ անտեղեակ է այդ հանգաման- քին, որ յիշեալ տղարանը անկարող կը լինի եր- կար ծառայել իրան: Աւելի լաւ չէր լինի նոր ձուլած տառեր և լաւ մամուլ դնել, որով ամեն քան մաքուր և որոշ կարելի կը լինի տղազրի- քան թէ առնել, այն էլ թաղելով տանելու համար, մի արդէն մաշված, հնացած, անպէտք տղարան: Թող սրբազանը դիմէ թիֆլիս և այնտեղ նա կըս- տանայ իր ուղած լաւ մամուլը և նոր ձուլած գեղեցիկ տառերը»:

ՋԱԼԱԼ-ՕԳԼՈՒՑ ստացանք հետեւեալ տեղեկու- թիւնները: «Քանի մի օր առաջ Հաղապարի վառ- քի վանահայր Յովսէփի վարդապետ խորագնաց, 15 տարեկան զոճուր աշխատութիւնից յետոյ, վեր- ջապէս աւարտեց Չորագետ կոչված գետի վրայով անցնող քարեայ կամուրջի շինութիւնը: Այդ կա- մուրջը մեծ յարմարութիւններ կը ներկայացնի Լուսն և Բորչալուի դաւանների բնակիչներին: Քանի որ այդ կամուրջը չը կար, յիշեալ գետը ամեն դուռնա բազմաթիւ դժուր էր տանում մե- րաւոր բնակիչներին, որոնք պէտք ունէին անց- նելու գետի մի ամիջ դէպի միւսը: Բացի սրա- նից ուրիշ տեղերից եկող մեր նշանաւոր վանքե- րից մինը տեսնել ցանկացողները, կամ ուխտա- տուները կարող են այժմ մինչև անգամ կառքե- րով հասնել մինչև վանքի դուռը: Լուսն ենք որ կամուրջը կառուցանող վանահայրը, այդ շինու- թեան համար 400 լուրջուց աւելի պարտքի տակ է ընկել: Արդե՞ք ով պիտի օգնէ նրան այդ պարտքից ազատելու»:

Այս տարի «Մշակի» դուրս գալուն պէս մեր լրագիրը ուղարկում ենք նոյն առաւօտը մեր բո- լոր բաժանորդներին: Բայց անցեալ 60-օրը համա- րը, տղարանից ու զուրս գալու պատճառով, փութային ճանապարհով չը կարողացանք հա- մարները նոյն առաւօտն ուղարկել, այլ ուղար- կեցինք մայիսի 2-ին դուրս եկած «Մշակի» համա- րը՝ միւս օրը, մայիսի 3-ին:

«Մշակի» կէս տարեայ բաժանորդագրութիւնը արդէն բացված է և շարունակվում է: Յուլիսի մէկից մինչև յունիսի մէկը, վեց ամսով գրվելու համար պէտք է վճարել 6 լուրջ: Յիշեցնում ենք մեր այն բաժանորդներին, որոնք դեռ չեն վճա- րել «Մշակի» այս և անցեալ տարեայ բաժանոր- դագրելը, որ ժամանակ է արդէն իրանց ապրուի- ները վճարելու:

Տեղական ուսու լրագիրները հաղորդում են, որ Անտոն Կորգանովի և Սօֆիա Տեր-Միկայելանի գործի ընտելութիւնը Սեւաստու, որ նշանակված էր մայիսի 30-ին, յետաձգված է մինչև սեպտեմ- բեր ամիսը:

«Новое Время» լսել է, որ Բագուի մէջ դի- տաւորութիւն կայ հիմնել մի լրագիր, որ յատկա- պէս նուիրված կը լինի մանկավարժական տեղա- կան հարցերի լինութեանը և կը հրատարակի երեք լեզուներով՝ ռուսերէն, հայերէն և թուր- քերէն լեզուներով:

«Тифл. Листок» լրագիրը հաղորդում է, որ այս րօպէիս հիւր է մեր քաղաքում ուսու յայտնի երաժիշտ-հեղինակ Չալիպոյի, որ այստեղից զը- նալու է Բորժոմ, այնտեղ ամուսնայ ամուսնին անցկացնելու համար:

«Մշակի» № 60-ի ներքին լուրերում մենք տը- պեցինք հայոց Բարեգործական ընկերութեան Շուշու բաժնի վարչութեան կողմից մի յայտարա- րութիւն ընկերութեանն արած դրամական նուի- րատուութիւնների մասին: Յայտնում ենք, որ այ- տուհետ մեզ անհարկն կը լինի դեռեւել «Մշա- կի» էջերում, նիւթի հետ միասին, այդ տեսակ յայտարարութիւններ, այլ լրագիրը կարող է աւ- տագրել այդ տեսակ տեղեկութիւններ միմյալ յայտարարութիւնների բաժնու, և այն էլ փո- ղով:

Յայտնի է, որ նոր օրէնքով օտարահայտակ- ներին արգելվում է Ռուսաստանի արևմտեան նա- խնդներում անշարժ կալուածներ ձեռք բերել: Այդ առիթով կիսիլ լրագիրները մի քանի տեղե- կութիւններ են տալիս այն մասին, թէ ինչ հո- դային սեփականութիւններ ունեն օտարահա- տակները հարաւ-արևմտեան նահանգներում: Այդ տեղեկութիւններից երևում է, որ Վոլնիայում օտարահայտակները տիրում են մինչև 500 հա- դար գետնատին հողի: Այդ կողմերում եղած օտա- րահայտակների թիւը 100 հազարի է հա- նում, որոնք զլխաւորապէս գերմանացիք և չեխեր են:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան անդամները հրաւիրվում են ներկայ լինելու ընդհա- նուր ժողովին, որը լինելու է ուրբաթ օր, յունի- սի 5-ին, Երեկոյեան 7 1/2 ժամին: Այդ նիստում պէտք է ընտրվեն ընկերութեան պաշտօնատար անձինք,—այն է փոխ-նախագահ, խորհրդի եր- կու անդամներ, քարտուղար և դանձապահ: Ներ- կայ կարող են լինել և կողմնակի անձինք:

ԲԱՊՈՒՑ մեզ գրում են: «Մայիսի 31-ին, կի- բակի օր, քաղաքիս Մարգարիտական ընկերու- թեան 23-օրը տարեգարձը կատարվեցաւ համեստ կերպով: Սուրբ պատարագին երգում էր պ. Կա- րա-Մուրադի խումբը և շատ աշուղ կերպով էր հրգում: Պատարագից յետոյ Բնկերութեան մի անդամը զանիւնով կարգաւորեցան ճառեր, երգեցան երգեր և ապա մաճառ հանվեցան օրի- ուրդների ձեռագործները: Այդ անշուք յօրեւանը կատարվելուց յետոյ կը սպասեց ընկերութեան 25-ամեակին, որը անշուշտ կը տօնենք փառա- ւոր կերպով նոյն ընկերութեան նոր շինութեան մէջ»:

Մեր թղթակիցը գրում է մեզ ԲԱՊՈՒՑ, որ պ. Կարա-Մուրադ տուեց այս օրերս իր վերջին կօնցէրը և դրանով փակեց իր կօնցէրները: Հատարակութիւնը բուռն ծա- փահարութեամբ յայտնեց իր համակրութիւնը պարտին և ցանկացաւ երրորդ սէզօնի համար մեծ աշուղութիւն: Զգացված պ. Կարա-Մուրադ ճորհակալութիւն յայտնեց հասարակութեան հա- մակրութեան համար և երբ դարձաւ դէպի իր երգողներին խումբը, նրա ընկերները բարձրացրին նրան ձեռքերի վրա և կեցցեցինք սկսեցին ճո- ճել նրան: Պ. Կարա-Մուրադ խոստացաւ իր միւս տարեայ կօնցերներին պարգևատրման ժողովրդական երգերով հարստացնել:

Կ. Պոլսում լոյս տեսաւ պ. Գրիգոր Չիլիկա- բեանի թարգմանութեամբ Վիկտոր Հիւգօյի «Թշուառներ» չորրորդ հատորը, երկրորդ տպա- դրութեամբ և պատկերազարդ: Գորս մի օրինա- կը ճորհակալութեամբ ստացանք պ. Նշան Պէր- պերեանից:

Կ. Պոլսում սկսեց հրատարակվել մի նոր շա- բաթակերթ «Հայրենիք» ամսուհով, խմբագրու- թեամբ Մ. Գալիպանեանի, որը մի ժամանակ խմբագրում էր «Լոյս» լրագիրը: Թերթի ուղղու- թիւնը բացատրելու համար խմբագիրը առաջնոր- դող յօդուածի մէջ ասում է, ի միջի այլոց, հե- տեալով. «Թերթը պիտի զգուշանայ երկրին շա- հուց հակառակ հրատարակութիւններէ, քարոզե- լով միշտ սա ճշմարիտ սկզբունքը թէ՛ հայն երբ հեռանայ իր տառնական քաղաքականութենէ, կը վնասի: Այդ ճշմարտութիւնը մերը չէ, այլ մեր ազգային պատմութեան, զոր ուսումնասիրող ամեն ոք կը համոզուի թէ՛ հայն ի հուռն երբ հեռացել է արեւելեան քաղաքականութենէ և մօ- տեցել է արեւմտեան քաղաքականութեան, մեծա- պէս վնասուել է»:

Մտացանք Էդգար Պօյ «Ոսկի բլղ» վեպի հա- յերէն թարգմանութիւնը: Գրքիցը թարգմանել է պ. Գեորգ Զահրուդաղեան: Թարգմանութեան լե- ղուն բառական հարթ և հասկանալի է: Ինչպէս երևում է այդ գրքիցի կազմի վրա տպած ցու- ցակից, պ. Զահրուդաղեան թարգմանել է մօտ տասն գլրք, և շարունակում է թարգմանել նոր գրքեր: Նշանով այդ թարգմանութիւնների ցու- ցակիւն, չէ կարելի չը նկատել հետեւելը. առհա- տարակ մեր թարգմանիչները իրանց թարգմանու-

թիւնների համար չեն ընտրում մի որոշ ճիւղի գրուածներ. մի և նոյն անձը թարգմանում է և բուռն զիտնական գրուածներ, և մանկական գրք- քեր և մանկավարժական գրքեր, և օգերէտ-օղբովի- ներ: Հասկանալի բան է, որ եթէ ամեն մէկը թարգ- մանէր իր համար մի որոշ բովանդակութիւն ու- նեցող գրքեր՝ այդ թարգմանիչները ժամանակով կարող կը լինէին մշակել աւելի լաւ լեզու, կարող կը լինէին գրականութեան այս կամ այն ճիւղին աւելի շօշափելի ծառայութիւն անել, մանաւանդ որ մենք չունենք թարգմանական այնպիսի ըն- կերութիւններ, որոնք իրանց համար մի որոշ ծրագիր կազմելով՝ թարգմանէին մեր պահանջնե- րին աւելի համապատասխանող գրքեր, և աշխա- տէին հարստացնել գրականութեան այն մասը, որը ներկայումս աւելի կարեւորութիւն ունի: Մեր թարգմանիչները գրքերի ընտրութիւն անելու մէջ աւհասարակ չատ թոյլ և անապրբեր են:

Մեզ գրում են ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ հետեւեալ: «Տեղիս նահանգական դատարանը վճռել է, ինչպէս լուսն ենք, այս տարի ամառանոց չը դնալ, Կա- րաչիպազում յարմարաւոր բնակարաններ չը լինե- լու պատճառով: Թէ դատարանի և թէ նահանգա- կան վարչութեան կազմակերպութիւնները ըն- դարձակվել են, իսկ Կարաչիպազի տները նոյնն են մնացել, ուստի երկու վարչութիւնների ծառա- յողները արդէն մեծ նեղութիւն են գրում տեղա- տրվելու յիշեալ ամառանոցի ընտելութեանը»:

Մայիսի 30-ին ԹԻՖԼԻՍՈՒՄ տեղի ունեցած հե- ղեղի մասին մեզ հաղորդում են հետեւեալ աւելի ճիշդ մանրամասնութիւնները. բացի նրանից որ շատ տներ զրկվեցան իրանց կտուրներից, փշվե- ցան սաստիկ քամու պատճառով՝ բազմաթիւ լու- սամուտները ապակիները, ջրի սաստիկ հոսանքից շատ փողոցներ լցվեցան տաղաւ, վաճառական- ներից շատերը զրկվեցան իրանց խանութի ա- ռաջ դրած ապրանքներից,—փոթերից անվնաս չը թողեց և կենդանիներին, այնպէս որ Բօտա- նիական այգիի դիմաց արածող նախկինց ջուրը քշեց շատ կովեր և կաթնատու այծեր, որոնցից մի քանիսն դուռն դուռ մինչև Կուրը չը հասած արդէն խեղդված, իսկ մնացածները բոլորովին ան- յայտացան: Թիֆլիսի ստորին մասում դանդաղ աչգիները այժմ մի օրտաճմիկ տեսարան են ներկայացնում՝ զրկված բոլոր ծառերը մշտված են՝ որը զրկված է ճիւղերից, որը տերեւներից, մինչև անգամ և պտուղներից. ընկուղ ծառեր արմատախիլ են եղած և աջ ու ձախ վայր ըն- կած, շատ մեծ մեծ ծառեր կոտրված են արմա- տից. բանջարեղէնները, կանաչեղէնները ջարդված են և ծածկված աւազով, բոլորովին կործանված են և այդիները մէջ եղած մի քանի փայտէ տը- նակներ: Սակայն քաղաքի ստորին մասում՝ Օր- թաճալցի այգիները ընտելեան մի այգիսիւր ա- լեւմտեանը դոհ գնալուց յետոյ, քաղաքի վերին մասի այգիները բոլորովին անվնաս են մնացել, որովհետեւ այդ միջոցում այնտեղ տեղի չէ ունե- ցել ոչ կարկուտ և ոչ էլ քամի:

Այժմ ԹԻՖԼԻՍՈՒՄ, ինչպէս լուսն ենք, տա- րածված է երեկոյանի մէջ կ ա մ ր ու կ տա- րափոխիկ հիւանդութիւնը և շատ դժբեր է տա- նում մանուկներից: Այդ ախտով հիւանդացած մանուկը շատ անգամ առողջանալուց յետոյ դար- ձեալ հիւանդանում է և սկսում է սաստիկ հազել: Այդպիսով կարծուկից յետոյ յայտնվում է շատ անգամ կոխորդի ցուրը, որով մանուկը խեղդվում է չնչկու միջոց չունենալու պատճառով:

Այս օրերս Հաւաքարում մի հայ որմնագոր- կինը նաւթի հետ անդրուշտեամբ վարվելով և նաւթը իր վրա թափելով՝ չարաչար սանջանքնե- րի մէջ այրվեցաւ ու մեռաւ, թողնելով իր երկու մանուկներին օրը:

Յունիսի 2-ին ուսու դերասանական խումբը, պ. Ֆորկատովի կառավարութեամբ և մասնակցու- թեամբ տիկին Սավինայի և պ. Խաչինի, ներկայաց- րեց Թիֆլիսի թատրոնում Զէկապիլի «Угрожение Строителю» (Կամակորի սանձահարելը) կոմէդի- ան, թարգմանութիւն Ալեքէյի: Կատարվալի դերը խաղում էր տ. Սավինա, իսկ Պետրուշիկի դերը պ. Խաչին: Առհասարակ ներկայացումը բաւական տառն անցաւ: Նրան Զէկապիլի պիւսան էլ բաւա- կան զգալի և նոյն իսկ անտեղի կրճատութեանը ենթարկվեցաւ. այդ ներկայացման ժամանակ Չենք կարող վճարողապէս ասել՝ արդե՞ք տիկին

Թիւերնայն յայտնում է, որ Ազգայնական մէջ իրերը դրուելուն վերջին ժամանակ էականապէս չէ փոխուել և նոր ձևատարարութիւնը զօրքերի և ապստամբներին մէջ չեն եղել: Սակայն Սիւլալում երկուք են կրում, որ զիջանքները բազմապէս զիջելով կապտամբներն:

Բէլգրադ, 2 յունիս: Նոր միւստուրուիան ծրագրով հետեւան է, սահմանադրութեան վերաբերութիւնը, բոլոր պետութիւնները հետ լարեկամական յարաբերութիւնները, ծախսերի խնայողութիւնը, և պետութեան կողմից յանձն առած բոլոր պարտաւորութիւնները խզմամբ կատարելու:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍ

Յունիսի 2-ին

Ռուսաց 1 ռուբլ 1 ծնոցի վրա արժէ	21 3/4	պէնս.
— — — — —	184 3/4	պփ.
— — — — —	228 1/4	սան.
Ռւկի — — — — —	9	6 կ.
Մարտային կուպոններ —	175	25
Արծաթ — — — — —	1	29
Բորսային դիւնդներ —	4 1/2	60/0
Պետական բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի 100	—	—
— — — — —	2-րդ —	99
— — — — —	3-րդ —	99
— — — — —	4-րդ —	99
— — — — —	5-րդ —	99
— — — — —	6-րդ —	—
Արեւելեան 50/0 փոխառութ. 1-ին շրջ. 99	—	62
— — — — —	2-րդ —	99
— — — — —	3-րդ —	100
Ներքին 50/0 առաջին փոխառութ.	266	50

— — — — —	244	75
51/20 ընտա	102	50
Ռսկայ ընտա	191	50
Եօթերորդ կոնսոլիդաց. փոխառութիւն	166	75
Նոր երկաթուղային ընտա	99	50
50/0 զրաւական թղթեր կալուած.	—	—
— — — — —	170	—
— — — — —	84	25
51/20 զրաւական թղթեր խնայողութիւն	98	75
— — — — —	102	87
60/0 զրաւակ. թղ. խնայողութիւն կալուած.	102	37
— — — — —	102	62
— — — — —	102	75
— — — — —	102	62
— — — — —	102	50
— — — — —	102	50
— — — — —	101	62
— — — — —	—	—
— — — — —	27 և 43	97
— — — — —	18 և 43	97

Վ. Օլտիսկո-կամսկի բանկի ակցիաները 683 > —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 269 > 25
Բիւրնակ-Վ. Օլտիսկի ընկ. 98 > 25
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ 96 > —
Մոսկովայի քաղաք. օբլիգացիաներ 96 > 12
Օրէսայի — — — — — 95 > 25
Թիֆլիսի քաղաք. կրկ. ընկ. օբլ. 84 > 50
Նոր փոխառութիւն — > —
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը
Ֆոնդերի վերաբերմամբ հանդարտ է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՐԻ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ի վան Ալէքսէի Զիթախանց դերձակների համբարին տալիս է տարեկան 150 ռ. որպէս զի դերձակների համբարը իր որդիները ամուսնացնէ: 1871 թուականից մինչև ներկայ թուականը ամեն տարի ամուսնացրել ենք աղջիկներ: Մեծապէս շնորհակալութիւն են յայտնում պ. Զիթախանցին թէ համբարը և թէ ստորընդան կարապետ Մարտիրոսան Գրիգորեանց:

Ես, կարապետ Մարտիրոսեան Գրիգորեանց, դնացի Սեան և տեսայ եկեղեցին, որը շինած էր Զիթախանցի պապից և պապն էլ մէջն է թողլով:

Բացի դերձակների համբարից պարոնը տալիս է և ճօները (գլխի կարոյները) համբարին կրկին 150 ռուբլի տարեկան, 1871 թուականից մինչև ներկայ թուականը: 2—2

Լոյս տեսաւ մամուլի տակից և վաճառվում է «Կենտրոնական» և «Կովկասեան» զրաւաճառանոցներում

ՈՍԿԻ ԲԶԷԶ

Ժողովրդական վէպ Եղգար Պօ, թարգմանեց Գրիգոր Շահբուզադեան:

Գինն է 20 կօպ:

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է «ԲՆԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ», Յոյսեր և բաղձանքներ ԱՆ ԴՐ Է Ա Ս Գ Վ Ե Ր Ի Է Լ Ի Ի: 1—3

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է Կենտրոնական զրաւաճառանոցում և Յ. Տէր-Սարգսեանի խանութում (Վրդովայա փողոցի վրա)

ՇԵՐՍՊԻՐ

ԵՒ ԻՐ ԷԱՄԵԹ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

աշխատասիրեց

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ.

Գինն է 1 ռուբլի:

4—10

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՅԱՆԶ Է ԱՌՆՈՒՄ ՊԱՏՐԱՍԵՆ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ զինազինների համար մինչև վերջերջը դասաւորան դասընթացը, — իսկ մաթեմատիկական աւարականից ամեն տեսակ դպրոցների բոլոր դասարանների համար: Յանկացողները իրանց հասցեն կարող են թողնել «Մշակի» խմբագրատանը: 2—3

Յուլիսի 1-ի վիճակահանութեան համար

ԵՂԲԱՐՑ ԾՈՎԻԱՆՈՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

(Սիւնի փողոց, քարվանսարայ Անանովի)

Ճիշտ Պետերբուրգի գնով վաճառում է խաղատոմսակներ 1 փոխառութեան և փոխ է տալիս ծախուածների գրաւականով մի ամիս ժամանակով 220 ՐՈՒԲԼԻ

ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ է 50 կօպ. հատը: Տարբ տոմսակից աւելին 45 կօպ. հատը. 20 տոմսակից աւելին 40 կօպ. հատը: 2—6

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԼ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Զորեղբարթի, յունիսի 10-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգեհատը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից գէպի Տրապիզոն, Որդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէլ: Տեղեկութիւնների մասին պէտք է զիմէլ ընկերութեան գործակալներին, Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնիօն, նախկին Արծրունի գալլերէում, № 103.

3—4

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԺԵՐԱՐԴԵԱՆ ՄԱՆՈՒՅԱՑՈՒՐԱՅԻ ՀԻԼԼԷ ԵՒ ԴԻՏՐԻՈ ՍԿՅԻՐԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍՈՒՄ տալով ի մեծ քանակութիւն ՋԱՆԱՋԱՆ ՏԵՍԱԿ ՊԱՐՈՒՄԻՆ և ՄԵՏԱՔՍԻ ՄՆԱՅՈՐԴԻ ԳՈՐԾՈՒՄԸ ամուսնայ շորերի (կիտիներ) համար. գրանաւոր քաթան, բէշ-մեթներ, երկրաների և տղամարդկերանց հագուստների համար. սեղանի սպիտակեղէն, ինչպէս են ԱՆՁՆՈՒՑՈՒԿՆԵՐ, ՍՓՈՒՑՆԵՐ, ԵՐԵՍՍՐԻԶՆԵՐ, պրիբորներ 6, 12, 18 և 24 անձանց համար: ԿԱՆԱՆՅ, ԵՐԵՆԱՅՈՑ և ՏՂԱՄԱՐԿԱՆՅ զեղնադոշի և սպիտակ ԳՈՐԾՈՒՄԻՆԵՐ: Բացի դրանից, միշտ պատրաստ կայ մեծ քանակութիւն ՊԱՐՈՒՄԻՆ ՎԱՆՆԵՐԻ ԵՒ ՏՈՊՐԱԿՆԵՐԻ համար. ՁԸ ԹԻՉՎՈՂ ՊԱՏՐԱՍԻ ՏՈՊՐԱԿՆԵՐ. ՊԱՐՈՒՄԻՆ ԲՐԵՉԵՆՏԻ ՀԱՄԱՐ, ԵՒ ԱՄԵՆ ՄԵՇՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍԻ ԲՐԵՉԵՆՏԻՆԵՐ: Օտարաբարդացիներին, նոցա ջանկարած ժամանակը, ուղարկում են նմուշներ:

ԳՕՆԵՐ ԵՒ ԼԷՅՅՑ ՀԱՍՑԷՆ—ԹԻՖԼԻՍ. ԴՎՈՐԵՂԱՅԱ ՓՈՐՈՅ. Նախկին Արծրունու գալլերէյա: ԲԱԴՈՒ. Օղջիկայա փողոց, տուն Բալաբէգ Լալայեանի: (Հ.) 4—5

(Հ.) 54—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли антикарскими товарами в Тифлисе (Графская ул., домъ бывш. Шабурова). ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՍԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԴՈՒԻ ՄԷՃ:

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ, Կովկասեան և արասասմանեան, այս գաղանք չիջեր մէջ նոր անված: ՅԵՏԻՑ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՈՂ, ՄԻՋՈՑՆԵՐ, Նախկին, քաթորա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Գաղանթիայի փոշի, և Բուրէշի անթեմ կոչված բոյսը: ՕՂԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ պրոֆէսոր ԿԵՏԱՐԱՅԻ, կարբոլաքրած փոշի երկաթի արձասպով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը խտակելու համար, կարբոլեան թթուութեամբ, մաքրված և չը մաքրված տեսակից, խնայելի կիր, ծծումբ, երկաթի արձասպ և Մարգանցի կրկնաթթուութեամբ:

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԻԼԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓԱՆԱԼՈՒ ԴԵՄ

ՊՕՐՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԿԵՐ, ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍՈՒՄ. ԹԻՖԼԻՍՈՒՄ Կովկասեան զեղնաճառասան, և պ. պ. Շահպարտեանցի, Մակիէրի, Սէնչիկօվսկու և Ազմուրովի զեղատներում: ԲԱԴՈՒԻ մէջ՝ Բէկէրի մօտ, ԳՈՐԾՈՒՅԻՍՈՒՄ Կօօչիլի մօտ, ՍՍԱՎՐՈՊՈԼԻՄ Բրոննօցկու մօտ և ԵՎԱՍՏՐԻՆՕՒՐԱՌՈՒՄ: (Հ.)

Hotel Nemecki Edmunda Dziechcinskiego, Warszawa, Ulica Długa, № 31. (Нѣмецкая гостиница Эдмунда Дзехцинскаго, въ Варшавѣ, Долгая улица, № 31). Պ. Էդմունդ Գլիկսիցիսկու «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՌԱՆՈՑՐ» վարչապալատ, գտնվում է քաղաքի կենտրոնում, գլխաւոր կառավարչական առեւտների, թատրոնների և առեւտրական կենտրոնական տեղերի մօտ: 90 սենեակներ, 30 կօպէկից մինչև 3 ռուբլի օրական գնով: Բնատօրան և քաղաքը կենտրոնում: Ճաշը 30 կօպէկից մինչև 1 ռուբլի: Կաթնքեր և դրիժմաններ դէպի բոլոր երկաթուղիները: Կաթնքերի վարձը շատ է ցածր: Գրադարան և օտար լրագիրներ՝ ձրիապէս հիւրերի համար: «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՌԱՆՈՑՐ», որ յաճախված է բաղմամբ հիւրերով Թիֆլիսից և նրա շրջակայներից, ստանում է այդ հիւրերի համար հայոց «ՄՇԱԿ» լրագիրը: (Հ.)

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Григоріа Арцруни, переводъ съ армянскаго А. Аракелянца. Цѣна 25 коп. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 kop. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amiranjanjanz. Preis 20 kop. Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру. Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Հ.)

ԾԻՍԼԻՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

ԲՕՍՏՈՎԻ (ԴՅՆԻ ՎՐԱ) ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐԵՐԻ

ԱՍԼԱՆԻԴԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

Մազալինը Դվոբոյայա փողոցում, Ղալաբարովի տանը, Թիֆլիսում, պատիւ ունի յայտնելու պ. պ. ԾԻՍԼԻՈՏԻՆ և ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ, որ փետրվարի 15-ից ներկայ թիվ մինչը բաց արկը ծխախոտի առեւտրը, որակի կարելի է ստանալ ԾԻՍԼԻՈՏԻ և ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ տմեն տեսակները մեր գործարանից բերված: Մեր ԾԻՍԼԻՈՏԸ իր առանձին յատկութիւնների համար, — լաւ համ, մեղմութիւն և դուրեկան արօժան, — վաղելում է երկարամեայ հաշակ և մեծ տարածութիւն Ռուսաց կայսրութեան և արասասմանի շատ քաղաքներում: Թիֆլիսում նոյնպէս և Անդրկովկասում մեր ֆաբրիկայի ծխախոտի արդիւնքները մինչև և այժմ յայտնի էին, այդ պատճառով մենք բաց արկը ծխախոտի մաղաղիւնը, ցանկանալով այդ մեր արդիւնքները երկրի մէջ մտցնել: Խոնարհաբար խնդրում ենք պ. պ. ծխողներին և վաճառականներին անտես չառնել ծանօթանալու մեր ֆիրմայի արդիւնքների հետ: Օտարաբարդացիների պահանջները կատարվում են շուտ և ճիշդ կերպով, փօտի ծախսը մաղաղիւն վրա է: Պրէյկովկանները յանկացողներին անվարձ են ուղարկվում:

Պ. Պ. ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՆՎՈՒՄ Է ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ՋԻՋՈՐԻՆ: ԱՍԼԱՆԻԴԻ Եղբայրներ 13—25

ՏՊԱԳՎՈՒՄ Է Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳՈՒՄ

և չուտով լոյս կը տեսնի

Ս Ո Ւ Ս Կ

ԼԽԱԿԱՍԱՐ ԵՐԳԱՐԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐ ՀԱՏՈՐԸ

Խրաքանչիւր օրինակի գինն է, կանխիկ բաժանորդ գրովների համար ՄԻ ՐՈՒԲԼԻ: Յանկացողները կարող են քարհանել Բաղու ՎՍՈՒՍԿԻ հրատարակչի Գրիգոր անանայ Գրիգորեանցին, հետեւալ հասցեով. Свѣщеннику Григорію Григоріанцѣ, въ Баку. 3—3